



ՈՏՔԵՐՈՒՆ ՏԱԿ ԲՈԼՈՐԻՆ

Յոխորս եւ բիրս այս մարդուն, կերպարանքին դէմ առ դէմ,
 Ե՛ւ բընութիւն Ե՛ւ անհաս պիտ՝ ընկերութեւ անվրէպ:
 Կըրակն իրաւ իր խօսքին եւ նայուածքին վըրդովիչ
 Գաղտնիքը գէտ մ'էր կարծես, ջուրերն որուն ունէին

Հոգի մը ներս փաշելու, խեղդելու ուժը ծածուկ:
 Հըպարսութեան այլամերժ պատրուակն ներքեւէն
 Կ'անցնէին կին, պատանի, մարդերն ամէն դիպուածի,
 Պարտեալներու խումբը այս, դառնալով շուրջն իր ծիրին:

Կը յօժարէր եւ երբեմն չէր յօժարէր նայուածքն իր:
 Կարծես լքման յագեցած, իր պողպատին մէջ հըզօր,
 Ի գոհացումն իր եսին անոնք ընդմիջ ապրէին:

Մինչեւ որ գար օրը սեւ, եւ ան գերին իր սիրոյն՝
 Իյնար յանկարծ զըլխիւլայր, խոնարհէր եսը իր մեծ
 Պարտեալներու ցամառն դէմ, ոտներուն տակ բոլորին:

Ա Ն Ե Լ

